ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ք. Իջևան «08» 04 2021թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղը (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ)՝ ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի, ով գործում է Կանոնադրության հիման վրա մի կողմից և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Տավուշի թեմը՝ ի դեմս առաջնորդ Տ. Բագրատ եպս. Գալստանյանի, ով գործում է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի 21.07.2015թ. ՀՄՐ. ԱԿ-124 հրամանի հիման վրա՝ մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին համագործակցության հուշագիր (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. Հուշագրի առարկան

1.1. Հուշագրի առարկան Կողմերի համագործակցության նպատակի, գործընկերության հիմնական ուղղությունների, Կողմերի իրավունքների և պարտականությունների սահմանումն է:

2. Հուշագրի նպատակը և համագործակցության հիմնական ուղղությունները

2.1. Հուշագրի նպատակը Կողմերի միջև գործընկերային հարաբերությունների հաստատումն է, համագործակցության ծրագրերի իրականացումը՝ Հուշագրի 2.2. կետում նախատեսված ուղղություններով:

2.2. Կողմերի համագործակցության հիմնական ուղղություններն են.

2.2.1. Ուսանողական աշխատանքային խմբի ձևավորում՝ Առաջնորդարան-Մասնաճյուղ կապ հաստատելու համար,

2.2.2. Ուսանողների և հոգևոր դասի ներկայացուցիչների միջև պարբերաբար հանդիպումների կազմակերպում,

2.2.3. Ուխտագնացությունների միջոցով գիտաճանաչողական համատեղ արշավների կազմակերպում,

2.2.4. Ազգային երգի և պարի դասընթացների կազմակերպում,

2.2.5. Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության ակումբների նախաձեռնած դասընթացների կազմակերպում Առաջնորդարանում,

2.2.6 Մասնաճյուղի երիտասարդ կամավորական ներուժի օգտագործում,

2.2.7. ՀՀ Տավուշի մարզի միայնակ, առավել խոցելի տարեցների, երեխաների ու երիտասարդների, անհայտ կորածների ընտանիքների, անապահով ընտանիքների, խոցելի համայնքների այցերի իրականացում,

2.2.8. Սույն Հուշագրի շրջանակներում այլ գործողությունների իրականացում:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Կողմերը պարտավոր են առաջնորդվել համագործակցության հետևյալ հիմնական սկզբունքներով.

- փոխադարձ վստահություն,
- պատասխանատվություն,
- պարտաճանաչություն,

- որակի վերահսկում
- փոխըմբռնում և փոխզիջում,
- թափանցիկություն,
- համագործակցություն:

4. Հուշագիրն ուժի մեջ մտնելու և գործողության ժամկետները

4.1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անժամկետ:

4.2. Հուշագիրը կարող է դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, մյուս Կողմին առնվազն 30 օր առաջ գրավոր տեղեկացնելու պայմանով:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1.Հուշագիրը Կողմերի համար որևէ ֆինանսական պարտավորություն չի առաջացնում:

6. Կողմերի իրավաբանական հասցեները

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ Հասցե՝ Տավուշի մարզ, ք. Իջևան Ուսանողական 3 **Տնօրենի պաշտոնակատար՝** **Ա.Մակարյան** **Կ.Տ.**	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Տավուշի թեմ Հասցե՝ Տավուշի մարզ, ք. Իջևան, Իջևանյան փ. 5 **Առաջնորդ՝** **Տ. Բագրատ եպս. Գալստանյան** **Կ.Տ.**